

## ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆՉԱՄԱՆՔՆԵՐԻ Ի ՊԱՇՏՈՆԵ ՊԱՐԶՄԱՆ ՍԿԶԲՈՒՆՔԻ («EX OFFICIO») ՀԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

### Տիգրան Խաչիկյան

*ԵՊՀ քաղաքացիական դատավարության ամբիոնի  
ասիստենտ, իրավ. գիտ. թեկնածու*

Ժամանակակից վարչական դատավարությունը հնարավոր չէ պատկերացնել առանց դրա ամբողջ բովանդակությունն ու իրական էությունը պայմանավորող ելակետային ճյուղային սկզբունքի՝ գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման:

Այսպես, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի<sup>1</sup> (*այսուհետ՝ Օրենսգրք*) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *գործի փաստական հանգամանքները դատարանը պարզում է ի պաշտոնե ("ex officio")*:

Ակնհայտ է, որ ի տարբերություն քաղաքացիական դատավարության, որը որպես կանոն իրականացվում է՝ հիմքում դնելով կողմերի մրցակցության և իրավահավասարության սկզբունքների ամբողջական գործողությունը, վարչական դատավարությունը նույն իրավական փիլիսոփայությամբ ուղղորդել չէր կարելի: Այս պարագայում իրավահարաբերությունների սուբյեկտների միջև առանց այն էլ բնականորեն առկա անհավասարության պայմաններում դատավարության ամբողջ ընթացքն ու բովանդակությունը չէին կարող լիարժեքորեն արդար լինել: Ասվածին գումարվում է նաև վարչադատավարական կարգով իրավունքների պաշտպանության առանձնահատկությունների ամբողջ համակարգը, որը գործին մասնակցող անձնաց առաջադրում է սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար պատշաճ հայցատեսակ ընտրելու անհրաժեշտություն: Նման պայմաններում էլ ավելի է կարևորվում այնպիսի սկզբունքի իրական գործադրումը, որը հայցվորի իրավունքների ենթադրյալ խախտման հարցին իրավական գնահատական կտա պաշտոնական դիրքերից՝ առանց սահմանափակվելու վերջինիս կողմից փաստացի վկայակոչված իրավական և փաստական հիմքերով ու հիմնավորումներով:

Այս առումով տեղին է մասնագիտական գրականության մեջ տեղ գտած այն կարծիքը, որ հանրային իրավահարաբերություններից բխող հայցային վարույթների կարևորագույն սկզբունքները կողմերի իրավահավասարությունը և տնօրինչականությունն են: Հետևաբար, վարչական դատավարությունում կողմերի ձևական հավասարության սկզբունքը պետք է լրացվի հավելյալ փոխհատուցող դատավարական գործիքներով՝ մեղմելու վիճելի իրավահարաբերության պետաիշխանական լիազորություններով չօժտված մասնակցի դրությունը<sup>2</sup>:

Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքն այս կամ այն ծավալով ուղղակիորեն ներգործում է վարչադատավարական գրեթե բոլոր ինստիտուտների վրա: Վարչական դատարանի դերը, գործի քննությունն իրականացնելու հարցում օրենսդրորեն ընձեռված ակտիվ գործիքակազմը, ի թիվս այլ-

<sup>1</sup> Ընդունվել է 05.12.2013 թ., ուժի մեջ է մտել 07.01.2014 թ., ՀՀՊՏ 2013.12.28/73 (1013).1

<sup>2</sup> Տե՛ս **Александровна Т.Н.**, Административный иск как средство защиты нарушенного публичного права, Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук, Москва, 2011, էջ 8:

նի, կանխորոշում են դատավարության այս տեսակի շոշափելի տարբերությունը քաղաքացիական դատավարությունից: Աներկբա է, որ այդ տարբերությունն ուղղակիորեն բխում է հանրային իրավահարաբերությունների էությունից, կողմերից մեկին ընծեռված լիազորությունների պետաիշխանական բնույթից: Հանրային իրավահարաբերություններից ծագող վեճերի դատական քննությունը չի կարող կենսագործվել մրցակցության սկզբունքի ամբողջական կիրառմամբ հենց թեկուզ այն պատճառով, որ դրա սուբյեկտներից մեկը մասնավոր անձ է՝ որպես կանոն շատ ավելի սահմանափակ ռեսուրսներով ու հնարավորություններով, քան ինստիտուցիոնալ հիմքերի վրա գործող հանրային իշխանության մարմինը:

Այսպես, Օրենսգրքի 5-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *դատարանը կաշկանդված չէ վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով և իր նախաձեռնությամբ ձեռնարկում է համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:*

Վկայակոչված օրինադրույթի բովանդակությունից ուղղակիորեն բխում է, որ գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքը դատարանին առաջադրում է՝

- *կաշկանդված չլինել վարչական դատավարության մասնակիցների ներկայացրած ապացույցներով, միջնորդություններով, առաջարկություններով, բացատրություններով և առարկություններով:*

- *իր նախաձեռնությամբ ձեռնարկել համարժեք միջոցներ՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելու համար:*

Բնականաբար վերը բերված վարքագծի դրսևորումները սոսկ վերացարկված գործողություններ չեն, այլ դրանցից յուրաքանչյուրն ունի հստակորեն արտահայտված իրավական բովանդակություն ու ծավալ և դրսևորվում է վարչադատավարական ամենատարբեր ինստիտուտներում:

Մասնավորապես, ինչպես արդեն իսկ նշվել է, վարչական ակտն առոչինչ ճանաչելու հայցապահանջի քննության շրջանակներում վարչական դատարանը որևէ կաշկանդվածություն չունի սահմանափակվելու բացառապես հայցվորի վկայակոչած իրավական հիմք-հիմնավորումներով և սեփական նախաձեռնությամբ պարտավոր է գնահատել վարչական ակտերին վերաբերող բոլոր հիմքերի առկայությունը: Բնական է, որ այս իրավակարգավորումը հենց ի պաշտոնե պարզման սկզբունքի ուղղակի դրսևորում է:

Հատկանշական է, որ անգամ վարչական ակտն անվավեր ճանաչելու մասին հայցերի քննության պարագայում նախադեպային իրավունքով վարչական դատարանին պարտավորեցնում է հայցվորին մատնանշելու վարչական ակտի անվավերությանը հանգեցնող ողջամտորեն հնարավոր բոլոր իրավական նորմերը: Այսպես, Վճռաբեկ դատարանն արձանագրել է, որ վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում վարչական դատարանը, անկախ հայցվորի կողմից վկայակոչված իրավական հիմքերից, պետք է մատնանշի նաև ողջամտորեն հնարավոր բոլոր այն իրավական նորմերը, որոնց խախտումը կարող է հիմք հանդիսանալ վարչական ակտի անվավերության համար, և առաջարկի հայցվորին դրանք համալրել համապատասխան փաստական տվյալներով: Միաժամանակ հաշվի առնելով տնօրինչականության սկզբունքի բովանդակությունը և դրա կիրառելիությունը նաև վարչական դատավարությունում՝ «Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատելիս հետագա դատարանական գործողությունների իրականացման ժամանակ վարչական դատարանը կաշկանդված է շահագրգիռ անձի կամահայտնությամբ: Մասնավորապես այն դեպքում, երբ հայցվորը դատարանի կողմից մատնանշման լիազորություն իրականացնելուց հե-

տող անդում է, որ վարչական ակտի իրավաչափությունը գնահատվի միայն որոշակի իրավական նորմի և ըստ այդմ ներկայացված փաստական հանգամանքների շրջանակներում, վարչական դատարանը գործի հետագա քննությունը պետք է իրականացնի և գործն ըստ էության լուծող դատական ակտում վարչական ակտի իրավաչափությունը գնահատի միայն իրավական և փաստական այդ հիմքերի շրջանակներում: Մինչդեռ այն դեպքում, երբ հայցվորը ևս գտնում է, որ դատարանը վարչական ակտի իրավաչափությունը պետք է ստուգի ամբողջ ծավալով, դատարանը վիճարկման հայցի հիման վրա հարուցված գործի շրջանակներում պարտավոր է ձեռնարկել ողջամտորեն հնարավոր բոլոր միջոցները վարչական ակտի իրավաչափությունն ամբողջ ծավալով գնահատելու համար անհրաժեշտ ապացույցներն ու տեղեկությունները ձեռք բերելու ուղղությամբ<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, վարչական ակտերի առոչնչության և անվավերության պահանջների քննության պարագայում նախադեպային իրավունքն առաջադրում է տարբեր մոտեցումներ: Եթե վարչական ակտն առոչնչ ճանաչելու մասին պահանջ քննելիս վարչական դատարանը պարտավոր է ստուգել վարչական ակտերի առոչնչության բոլոր հիմքերը անկախ հայցվորի կողմից դրանց վկայակոչումից կամ համաձայնությունից, ապա վարչական ակտն անվավեր ճանաչելու պարագայում Վճռաբեկ դատարանը ի պաշտոնե պարզման սկզբունքի համատեքստում սոսկ կարևորում է դատարանի կողմից մատնանշման պարտականության կատարում և դրանից հետո առաջնությունը տալիս է հայցվորի դիրքորոշմանը: Այս հատվածում փաստացի հատվում են գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման և տնօրինչականության սկզբունքները՝ նախապատվությունը տալով վերջինիս:

Գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի իրացման կենսածները բազմաթիվ են: Օրինակ, Օրենսգրքի 32-րդ հոդվածի 1-ին մասը դատարանին իրավունք է վերապահում վկա հրավիրել նաև սեփական նախաձեռնությամբ, 37-րդ հոդվածն ամրագրում է դատարանի նախաձեռնողականությունը՝ նշանակելու փորձաքննություն, 44-րդ հոդվածի 3-րդ մասն ամրագրում է դատարանի կողմից փաստաթղթի իսկության հարցի ստուգումը նաև սեփական նախաձեռնությամբ և այսպես շարունակ: Նման դեպքերն ու օրինակները հենց ի պաշտոնե պարզման սկզբունքի դրսևորումներ են վարչադատավարական հարաբերություններում:

Ինչ վերաբերում է գործի լուծման համար անհրաժեշտ և իրական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն, ապա պետք է նկատել, որ դատարանի այս հայեցողությունը ևս բացարձակ չէ: Այն յուրաքանչյուր դեպքում պետք է իրականացվի՝ հիմքում ունենալով գործով ապացուցման առարկայի հետ տվյալ փաստերի օբյեկտիվ կապը, և որևէ պարագայում չենթադրի անհարկի փաստերով դատաքննությունը ծանրաբեռնելուն ուղղված դատարանի գործողություն:

Համանման դիրքորոշում է արտահայտել նաև Վճռաբեկ դատարանը՝ արձանագրելով, որ վեճի լուծման համար էական փաստերը մատնանշելու և դրանց վերաբերյալ ապացույցներ պահանջելու, անհրաժեշտ ներքին համոզումնք ձևավորելու նպատակով ողջամիտ միջոցներ ձեռնարկելու վերաբերյալ դատավարական գործողությունների իրականացման դատարանի իրավունքը սահմանափակված է բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման վրա հիմնված պատճառաբանված ներքին համոզման հանգելու դատարանի պարտականությամբ և պետք է բխի

<sup>1</sup> Տե՛ս թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը:

արդարության բոլոր պահանջների պահպանման սահմանադրական հիմնադրույթից<sup>1</sup>:

Սեկ այլ որոշմամբ ՀՀ Վճռաբեկ դատարանն անհրաժեշտ է համարել գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքի վերաբերյալ նախկինում արտահայտած իրավական դիրքորոշմանն ի հավելում նշել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում ամրագրված փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելու (ex officio) սկզբունքը վերաբերում է բացառապես գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե պարզելուն, այլ խոսքով՝ կոնկրետ գործի լուծման համար անհրաժեշտ իրավաբանական փաստերի վերաբերյալ հնարավոր և հասանելի տեղեկություններ ձեռք բերելուն և չի վերաբերում դատարանի կողմից սեփական նախաձեռնությամբ հայցի իրավական հիմքերը լրացնելուն, դատարանի նախաձեռնությամբ վեճի սահմաններից դուրս գալուն (...)<sup>2</sup>:

ՀՀ Վճռաբեկ դատարանը նախկինում կայացրած մեկ այլ որոշմամբ արձանագրել է, որ ՀՀ Սահմանադրությամբ և Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայով երաշխավորված դատական պաշտպանության իրավունքի իրացման հիմնական սկզբունքներից է տնօրինչականության (դիսպոզիտիվության) սկզբունքը, որն անձի՝ ՀՀ Սահմանադրությամբ և օրենքով նրան տրված հնարավորությունն է՝ սեփական հայեցողությամբ տնօրինելու իր նյութական և դատավարական իրավունքները և դրանց պաշտպանության եղանակները: Տնօրինչականության սկզբունքն անձանց հնարավորություն է տալիս ինքնուրույն որոշել՝ դիմե՞լ, թե՞ չդիմել դատարան իրենց իրավունքների, ազատությունների և օրինական շահերի պաշտպանության համար, այսինքն՝ իրականացնե՞լ, թե՞ չիրականացնել իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքը: Անձինք իրենց դատական պաշտպանության հիմնական իրավունքն իրացնելիս, ինչպես նաև դատարաններն արդարադատություն իրականացնելիս պետք է առաջնորդվեն վերը նշված սկզբունքով:

Դատական պաշտպանության իրավունքի իրացումը տնօրինչականության սկզբունքի հիման վրա անձի համար երաշխավորում է նաև հայցի առարկան և հիմքն ինքնուրույն որոշելու իրավական հնարավորություն:

Միաժամանակ ՀՀ վճռաբեկ դատարանը փաստել է, որ վարչական դատավարությունում հայցվորը չի կրում հայցադիմումում հայցի իրավական հիմքերը մատնանշելու օրենսդրական պարտականություն: Օրենսդիրը հայցվորի համար սահմանել է պարտականություն հայցադիմումում մատնանշել միայն իր պահանջը և այն հիմնավորող փաստարկները: Մյուս կողմից, վարչական մարմինների ոչ իրավաչափ վարչական ակտերի, գործողությունների և անգործության դեմ ֆիզիկական ու իրավաբանական անձանց իրավունքների դատական պաշտպանությունն արդյունավետ դարձնելու և վերջիններիս նկատմամբ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների ունեցած փաստացի առավելությունները հնարավորինս մեղմելու նպատակով՝ օրենսդիրը վարչական դատարանին օժտել է ակտիվ դերակատարությամբ: Ըստ այդմ վարչական դատարանը պարտավոր է ինքնուրույն որոշել վեճի լուծման համար կիրառության ենթակա իրավական նորմերը, ապա ձեռնարկել համարժեք միջոցներ գործն ի պաշտոնե քննելու համար<sup>3</sup>:

<sup>1</sup> Տե՛ս թիվ ՎԴ/5525/05/08 վարչական գործով ՀՀ վճռաբեկ դատարանի 17.04.2009 թվականի որոշումը:

<sup>2</sup> Տե՛ս թիվ ՎԴ/3271/05/12 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 18.07.2014 թվականի որոշումը:

<sup>3</sup> Տե՛ս թիվ ՎԴ/2976/05/15 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 30.11.2018 թվականի որոշումը:

Օրենսգիրքն ի պաշտոնն քննության սկզբունքի բովանդակությանը վերաբերող հոդվածի մնացյալ մասերում ամրագրում է նաև հիշյալ սկզբունքի իրացման առավել տիպական դրսևորումները՝ մասնավորապես ամրագրելով, որ՝

- դատարանը մատնանշում է հայցադիմումներում առկա ձևական սխալները,
- առաջարկում է ճշտել հայցային ոչ հստակ պահանջները,
- ոչ ճիշտ հայցատեսակները փոխարինել պատշաճ հայցատեսակներով,
- տարբերակել հիմնական և ածանցյալ պահանջները,
- համալրել ոչ բավարար փաստական տվյալները,
- պահանջում է, որ ներկայացվեն գործի փաստական հանգամանքները պարզելու և գնահատելու համար անհրաժեշտ բոլոր ապացույցները:

Հայցադիմումում առկա ձևական սխալների մատնանշումով և ոչ հստակ հայցային պահանջների ճշգրտմամբ դատարանն ի ցույց է դնում վարչական դատավարությունում իր դերային առաքելությունը: Դատարանը պարտավոր է մատնանշել այն ձևական սխալները, որոնք թույլ է տվել հայցվորը, ընդ որում՝ այդպիսի պարտականություն կարող է ներկայացվել ինչպես հայցադիմումի վարույթ ընդունման, այնպես էլ նախապատրաստական փուլերում: Այս իմաստով պետք է նկատի ունենալ, որ հայցում թույլ տրված ձևակալ սխալների առկայությունն ինքնին հիմք է հայցադիմումը վերադարձնելու համար, որի դեպքում դատարանը պարտավոր է մատնանշել հայցում առկա բոլոր սխալները՝ ելնելով իրավունքների արդյունավետ պաշտպանության գաղափարի տեղայնացումից: Վճռաբեկ դատարանը ևս նշված երկու գործառնությունների իրացումը դիտարկում է անձի իրավունքների արդյունավետ դատական պաշտպանության սկզբունքի համատեքստում՝ արձանագրելով, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնն պարզելու ("ex officio") սկզբունքի համաձայն՝ դատարանի ակտիվ դերակատարությունն արտահայտվում է մասնավորապես որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի պարտականությամբ: Այսպես, գործնականում հնարավոր են դեպքեր, երբ ֆիզիկական և իրավաբանական անձինք՝ որպես վարչական դատավարության մասնակիցներ, ակնկալելով վարչական դատավարության կարգով վերականգնել իրենց խախտված իրավունքները, հայցադիմումը ներկայացնում են ձևական սխալներով, ճիշտ չեն ընտրում ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով սահմանված համապատասխան հայցատեսակը կամ ճիշտ չեն ձևակերպում իրենց հայցային պահանջները կամ ճիշտ չեն տարբերակում հիմնական ու ածանցյալ պահանջները կամ ներկայացնում են ոչ բավարար փաստական տվյալներ: Նշված դեպքերում վարչական դատարանի դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականությունը ստանում է գործնական մեծ նշանակություն, քանի որ հայցադիմումներում առկա ձևական սխալները մատնանշելու, ինչպես նաև ոչ հստակ հայցային պահանջները ճշտելու, ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու, հիմնական և ածանցյալ պահանջները տարբերակելու, ոչ բավարար փաստական տվյալները համալրելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելու վարչական դատարանի պարտականության պատշաճ կատարման պայմաններում ապահովվում են ոչ միայն արդյունավետ դատաքննությունը, այլ նաև անձի խախտված իրավունքների արդյունավետ դատական պաշտպանությունը<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ոչ ճիշտ հայցատեսակները պատշաճ հայցատեսակներով փոխարինելու լիազորությանը, ապա պետք է փաստել, որ այն չափազանց կարևոր գործիք է՝ երաշխավորելու սուբյեկտիվ իրավունքների պաշտպանության համար ընտրված մկիջոցի արդյունավետությունը: Դատարանն այն իրականացնում է՝ ել-

<sup>1</sup> Տես թիվ ՎԴ/4315/05/14 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 22.04.2016 թվականի որոշումը:

նելով այն ակնկալվող բարիքից, որին անձը ցանկանում է հասնել ընտրված հայցատեսակով և դրա՝ սեփական իրավունքների պաշտպանության համար իրական արդյունավետության հրամայականից: Դրանով պայմանավորված՝ ինչպես օրենսդրորեն, այնպես էլ նախադեպային իրավունքով հատուկ ընդգծվում է այս առաքելության կարևորությունը:

Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականությանը, արձանագրել է միմյանց փոխկապակցված երեք վարքագծի բաղադրիչներ.

1) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրությունն ինքնին չի ենթադրում, որ դատարանի առջև բարձրացված վեճը (հայցը) ենթակա չէ դատարանի քննությանը,

2) հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության դեպքում վարչական դատարանը ոչ թե պետք է որոշում կայացնի վեճը (հայցը) դատարանի քննությանը ենթակա չլինելու հիմքով հայցադիմումի ընդունումը մերժելու կամ վարչական գործի վարույթը կարճելու մասին, այլ պարտավոր է առաջարկել հայցվորին ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով (մատնանշել ճիշտ հայցատեսակը),

3) եթե հայցվորի կողմից ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված համապատասխան հայցատեսակի սխալ ընտրության և վարչական դատարանի կողմից պատշաճ հայցատեսակի մատնանշման պարտականության պատշաճ կատարման պայմաններում հայցվորը շարունակում է պնդել իր կողմից ներկայացված սկզբնական ոչ ճիշտ հայցապահանջը, ապա դատարանը պարտավոր է կայացնել այդ հայցապահանջի շրջանակներում հարուցված վարչական գործի հետագա ճակատագիրը լուծող դատական ակտ<sup>1</sup>:

Վերը հիշատակված նախադեպը, ինչպես տեսնում ենք, ի պաշտոնե պարզման սկզբունքը պահպանված համարելու համար բավարար է համարում սոսկ դատարանի կողմից մատնանշումը՝ փոփոխելու ներկայացված հայցատեսակը: Եթե, այնուամենայնիվ, պատշաճ հայցատեսակի մատնանշումից հետո կողմը շարունակում է պնդել ներկայացված հայցատեսակը, ապա դատարանը պարտավոր է գործի քննությունն իրականացնել ընտրված հայցատեսակի շրջանակներում: Ընդ որում, վերոշարադրյալ սկզբունքից նաև բխում է, որ եթե դատարանը չի իրականացրել իր համոզմամբ ճիշտ հայցատեսակի մատնանշման իր դատավարական պարտականությունը, ապա չի էլ կարող հետագայում հայցը մերժել այն հիմքով, որ հայցվորի կողմից ընտրվել է սխալ հայցատեսակ:

Իրավակիրառ պրակտիկայում հաճախ են պատահում դեպքեր, երբ դատարանն առաջարկում է ոչ ճիշտ հայցատեսակը փոխարինել պատշաճ հայցատեսակով դեռևս հայցադիմումը վարույթ ընդունելու փուլում: Նման գործելաոճի թույլատրելիության հարցին անդրադարձել է նաև Վճռաբեկ դատարանը՝ հայտնելով դիրքորոշում, որ ընդհանուր առմամբ դա թույլատրելի գործալեռճ է: Մասնավորապես, բարձրագույն դատական ատյանն արձանագրել է, որ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի ուժով վարչական դատարանի վրա դրված է որոշակի դատավարական գործողություններ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու պարտականություն: Այդ պարտականության դրսևորումներից մեկը ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու վերաբերյալ դատավարության մասնակիցներին առաջարկ անելն է: Ըստ ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ որոշակի դատավարական գործողություն-

<sup>1</sup> Տե՛ս թիվ ՎԴ/0229/05/15 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 20.07.2017 թվականի որոշումը:

ներ կատարելիս դատավարության մասնակիցներին օժանդակելու վարչական դատարանի՝ գործի փաստական հանգամանքներն ի պաշտոնե ("ex officio") պարզելու սկզբունքի էությունից բխող պարտականությունը վարչական դատավարությունում կարող է իրականացվել թե՛ գործը հարուցելու, թե՛ գործը դատաքննության նախապատրաստելու, թե՛ դատաքննության փուլերի ընթացքում: ՀՀ Վճռաբեկ դատարանը գտել է, որ վարչական դատարանի կողմից ոչ ճիշտ հայցատեսակը պատշաճ հայցատեսակով փոխարինելու (պատշաճ հայցատեսակը մատնանշելու) վերաբերյալ հայցվորին առաջարկ անելու պարտականությունը կարող է իրացվել նաև գործի հարուցման փուլում: Հայցադիմումի ընդունելիության (գործի հարուցման) փուլում նշված դատավարական գործողությունը պետք է կատարվի հայցադիմումը վերադարձնելու մասին որոշման շրջանակներում: ՀՀ Վճռաբեկ դատարանի գնահատմամբ՝ վարչական դատարան ներկայացված հայցադիմումում հայցվորի պահանջը տվյալ վիճելի իրավահարաբերությունից բխող և ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված ճիշտ հայցատեսակին անհամապատասխան ձևակերպված լինելը հիմք է տվյալ հայցադիմումը վերադարձնելու համար՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 73-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետի խախտման հիմքով: Այլ կերպ ասած՝ այն դեպքում, երբ հայցադիմումի ընդունելիության փուլում առկա են բավարար հիմքեր՝ հանգելու այն եզրակացության, որ անձի կողմից վարչական դատարան ներկայացված հայցապահանջը ձևակերպված չէ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված պատշաճ հայցատեսակի հայցի առարկային համահունչ, ապա տվյալ հայցադիմումը ենթակա է վերադարձման՝ որպես բավարար չափով հստակ կամ որոշակի չձևակերպված պահանջ պարունակող հայցադիմում<sup>1</sup>:

Ինչ վերաբերում է ապացույցներն ու ոչ բավարար փաստական տվյալները համալրելու և ճշգրտելու մասով դատարանի առաքելությանը, ապա պետք է փաստել, որ դրա կենսագործումը ևս ի պաշտոնե պարզման սկզբունքի համատեքստում ունի անկյունաքարային նշանակություն: Այն գործնական նշանակություն և արժևորում է ստանում դատարանի կողմից ամենատարբեր լիազորությունների կենսագործման ընթացքում: Մասնավորապես, փաստաթղթի իսկությունը վիճարկելու հարցում դատարանի ակտիվ նախաձեռնողականությունը, սեփական նախաձեռնությամբ ապացույցներ պահանջելը և այլն ոչ այլ ինչ են, քան փաստական տվյալների և ապացույցների շրջանակի հսկատեցմանն ուղղված դատարանի ակտիվ առաքելության դրսևորում:

Առանձին հետարքրքրություն է ներկայացնում նաև վերաքննիչ վարչական դատարանում գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզման սկզբունքի հետ աղերսվող լրացուցիչ ապացույցների ընդունման իրավական կարգավորումը: Այսպես, Վարչական դատավարության օրենսգրքի 144-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *վերաքննիչ դատարանն ընդունում է սույն օրենսգրքով կամ վարչական դատարանի սահմանած ժամկետում դատավարության մասնակցի կողմից վարչական դատարան չներկայացված ապացույցները, բացառությամբ այն դեպքի, երբ համարում է, որ դրանք գործի լուծման համար էական նշանակություն չունեն: Եթե դատավարության մասնակիցը չի հիմնավորում, որ վարչական դատարանում գործի քննության ժամանակ ապացույցը չի ներկայացրել իր կամքից անկախ հանգամանքներով, ապա դատական ծախսերը, անկախ գործի ելքից, սույն օրենսգրքի 60-րդ հոդվածի 11-րդ մասով սահմանված չափով (դատական ծախսերի եռապատիկն է) կրում է դատավարության այդ մասնակիցը:*

Ստացվում է, որ անկախ գործի ելքից՝ վերաքննիչ վարչական դատարանում լրացուցիչ ապացույց ներկայացրած դատավարության մասնակիցը եթե չի հիմնա-

<sup>1</sup> Տես թիվ ՎԴ/3804/05/15 վարչական գործով ՀՀ Վճռաբեկ դատարանի 14.03.2017 թվականի որոշումը:

վորում վարչական դատարանում կոնկրետ ապացույցի ներկայացման անհնարինությունն իր կամքից անկախ հանազամանքներում, ապա պետք է կրի դատական ծախսերի հատուցման պարտավարություն դատական ծախսերի եռապատիկ չափով, ինչը, մեր համոզմամբ, սկզբունքորեն անթույլատրելի է: Նախ պետք է նկատել, որ հատկապես հաշվի առնելով վարչական դատավարությունում գործող փաստերի ի պաշտոնե պարզման սկզբունքի գոյությունը՝ վարչական դատավարությունում որդեգրված վերաքննության մոդելին առնչվող մետեցումն ավելի ազատական պետք է լիներ այս հարցում կամ առնվազն չենթադրեր այդչափ անբարենպաստ հետևանքների առաջացման ծանրություն: Դեռ չենք խոսում նշված անբարենպաստ հետևանքների համաչափության մասին, որը բոլորովին այլ քննարկման թեմա է: Անգամ եթե մի պահ պայմանականորեն ընդունենք, որ նշված մոտեցումը դրդում է դատավարության մասնակիցներին դրսևորել անհրաժեշտ դատավարական կարգապահություն, ապա այլ հարց է դառնում, թե արդյոք այդ միջոցը համաչափ է այդ նպատակի կենսագործմանը: Ակնհայտ է, որ նշված հարցադրման պատասխանն առավելապես բացասական է՝ պայմանավորված, ի թիվս այլնի, հենց «ex officio» սկզբունքի իրացման սահմանների չհիմնավորված նեղացմամբ:

Ամփոփելով պետք է արձանագրել, որ արդի դատավարական օրենսդրությամբ այս սկզբունքի նախատեսումը, մեր համոզմամբ, չպետք է սահմանափակվի սոսկ վարչական դատավարությամբ: Թեպետ գործող քաղաքացիական դատավարական օրենսդրությամբ տարբեր վարույթների համար այս կամ այն չափով նախատեսվել է նշված սկզբունքի կիրառման պարտադիրությունը, այսուհանդերձ պետք է փաստել, որ հանրային իրավագիտակցությունը դեռ չի հասել այն մակարդակին, որ հնարավորություն տա սովորական չտարբերակված դատավարական ձևերի պայմաններում ևս լիարժեք անցում կատարել այսպես կոչված «պասիվ դատարանի» մոդելին այնպես, ինչպես նախատեսված է քաղաքացիադատավարական օրենսդրությամբ: Վերջին հաշվով, այս սկզբունքը դեպքերի մեծ մասում դատավարության մասնակիցներին ապահովում է մրցակցության և անկողնակալության սկզբունքի խախտում չհամարվող ի պաշտոնե աջակցություն, որի դերը դժվար է գերազնահատել նաև քաղաքացիական դատավարությունում՝ պայմանավորված իրավակիրառ պրակտիկայում առաջացող ամենաբազում խնդիրներով:

## CHARACTERISTICS OF THE PRINCIPLE OF EXAMINING THE FACTS OF THE CASE EX OFFICIO

**Tigran Khachikyan**

*Assistant at the YSU Chair of Civil procedure,  
Candidate of Legal Sciences*

The following article is devoted to the principle of examining the facts of the case ex officio, which emphasizes the features of administrative court procedure. Consequently, the active role of the court in administrative procedure when stipulating the principle of examining the facts of the case ex officio is being discussed. Specifically, when resolving the dispute between the participants of public relations the court eliminates the factual inequality between the citizen and the public authority.



## ХАРАКТЕРИСТИКИ ПРИНЦИПА ВЫЯСНЕНИЯ ФАКТИЧЕСКИХ ОБСТОЯТЕЛЬСТВ ДЕЛА «EX OFFICIO»

Тигран Хачикян

*Ассистент кафедры гражданского процесса ЕГУ,  
кандидат юридических наук*

---

Данная статья посвящена принципу выяснения фактических обстоятельств дела «ex officio», который в большей степени подчеркивает особенности административного судопроизводства. Соответственно, изучается вопрос активной роли суда в административном судопроизводстве, предусматривающем принцип выяснения фактических обстоятельств дела «ex officio». В силу рассматриваемого принципа суд, разрешая спор между участниками публичного правоотношения, «устраняет» имеющее место фактическое неравенство между гражданином и органом публичной власти.

**Բանալի բառեր** – վարչական ակտ, անվավեր, վավեր, գործի փաստական հանգամանքների ի պաշտոնե պարզում, հանրային հարաբերություններ, վարչական դատավարություն, հայց, գործ

**Ключевые слова:** административный акт, недействительный, принцип определения фактических обстоятельств экс-офисо, публичные правоотношения, административное судопроизводство, иск, дело

**Key words:** administrative act, valid, invalid, the principle of clarifying the factual circumstances of the case officially, public relations, administrative court procedure, «ex officio», claim, case